ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՈՆԸ

ՅՈՐԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Կիրակի, հոկտեմբերի 13-ին, յոբելեանական հանդէսի օրը Ներսիսեան դպրոցի նոր շէնքը ամբողջապէս զարդարած կը լինի ծաղիկներով և թարմ ոստերով, իսկ գահլիճը՝ նոյն դպրոցի հիմնադիր Ներսէս կաթողիկոսի, Մանթաշեանի և մէջ բարերարների նկարներով։

—

Կիրակի օրը, հոկտ. 13-ին, եկեղեցական թափորը, որին մասնակցելու են ամբողջ հոգևորական դասը, քաղաքի պետական, հասարակական և կուլտուրական հաստատութիւններից հրաւիրած բարձրաստիճան անձինք և դպրոցների բարձր դասարանների աշակերտները, դուրս գալով Վանքի աւագ եկեղեցուց, կը գնէմ դէպի Ներսիսեան դպրոց, որտեղ յոբելեանական հանդէսը կը բացի մաղթանքով։ Հրաւիրած հիւրերին դպրոցի հոգաբարձութիւնը կը պատի թէյով։

—

Թեմիս առաջնորդը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը։—Այն անձինք, որոնք ցանկութիւն ունին կիրակի հոկտեմբերի 13-ին, Ներսիսեան դըպրոցի նոր շէնքում յոբելեանական հանդէսին շնորհաւորական խօսք ասել, թող հաճեն մինչև շաբաթ օրը յայտնել այդ մասին առաջնորդարանում։

—

Հայոց Ազգային Ընկերութեան հայ գրերի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի յոբելեանի առթիւ կազմակերպելիք Հայկական հրատարակութիւնների ցուցահանդէսը բացուում է մաս-մաս, իւրաքանչիւր մասը առանձին, դասախօսութիւններով և բացատրութիւններով։ Թուանայ մամուլի ցուցահանդէսը բացուում է այսօր, ուրբաթ, Ազգային Ընկերութեան գանձարանում (Լերմոնտովսկոյ փող. № 1), իսկ դասախօսութիւնը տեղի կունենայ նոյն տեղը չորեքշաբթի, ասենք 16-ին, այն օրը, երբ 1794 թ. Մատրասում լոյս է տեսել Շմաւոնեան քահանայի խմբագրութեամբ առաջին հայկական Թերթի՝ «Ազդարարի» առաջին համարը։ Ցուցահանդէսի և դասախօսութեան մուտքը ձրի է, միայն գանձիի փոքրութեան պատճառով դասախօսութեան թոյլ կը տրուի Ազգային Ընկերութեան բոլոր անդամները և հրաւիրած հայկական ընկերութիւնների, հաստատութիւնների և խմբագրութիւնների ներկայացուցիչները։

—

Հայուհեաց «Մեղու» աշխատանքի տան վարչութիւնը իր ամսոյս 9-ի հերթական նիստին որոշեց՝ հայոց տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանական հանդէսին մասնակցել հետեւեալ ձեւով. 1) ուղարկել ներկայացուցիչ տ. տ. Մինասեանին և Շահպարեանին էջմիածին ներկայ լինելու յոբելեանական հանդէսին։ 2) շաբաթ աշխատանքի տան բոլոր բաժանմունքներում բացատրել մանրամասն բոլոր աշակերտուհիներին մեծ տոնի նշանակութիւնը, 3) ձեռք բերել Մասակ-Մեսրոպի պատկերները և նրանց մասին տպագրած գրքերը և բաժանել բոլոր աշակերտուհիներին։ 4) Նոյն օրը ի յիշատակ մեծ տոնի ճաշ տալ 100 չքաւոր աշակերտուհիներին և բոլոր բանւոր ծառայողներին, 5) Կիրակի, ամսոյս 13-ին, վարչութեան ամբողջ կազմով, ուսուցիչներով և աշակերտուհիներով ներկայ լինել Վանքի աւագ եկեղեցում յոբելեանական մաղթանքին, և այնուհետև ներկայացուցիչներ ուղարկել Ներսիսեան դպրոցը ներկայ լինելու յոբելեանական հանդէսին։

—

Հաղորդութիւն մեզ գրում են, որ տառերի գիւտի և տպագրութեան յոբելեանը կը կատարուի այնտեղի ծխական դպրոցում հոկտեմբերի 13-ին ցերեկոյթով։ Նախաձեռնութեամբ ուսուցչական խմբի։

ՈՒՂՂՈՒՐՊԱՏՈՐՆԵՐ

Մոսկա, 4 հոկտեմբերի

Էջմիածնից հրաւիրաթուղթ է ուղարկած տեղիս հայ գաղութի եկեղեցական գոյքերը կառավարող խորհրդին՝ իր ներկայացուցիչը ուղարկելու Էջմիածին մտնելու տօնակատարութեան մասնակցելու համար։

Երէկ Գասպարեան անկիւնացուցում ժողով էր գումարած խորհրդակցելու համար, թէ ինչպէս պէտք է տօնել ազգային այդ մեծ տօնը։

Ի միջի այլոց պէտք էր որոշել Էջմիածին ուղարկելիք պատգամաւորի հարցը։

Դաղտնիք չէ, որ Էջմիածինը, հանդէս գալով ուզուրպատորի դերում, խլեց ժողովրդից ազգային մեծ տօնի կատարման ձեռներէջութեան իրաւունքը և դրանով ժողովրդի մէջ երկպառակութիւն ցցելով նրա միրոը կոտրեց։ Եւ այդ է պատճառը, որ երբէկայ ժողովին միայն 19 հոգի էր եկել։ Այդ 19 հոգին էլ որոշեց ներկայացուցիչ ուղարկել Էջմիածին։ Այստեղ յիշենք, որ Մոսկուայի հայ գաղութի թիւը ցուցակագրած է մօտ 600 հոգի։ Արդ, մի՞թէ 19 հոգով ընտրած պատգամաւորը բարոյական իրաւունք ունի Մոսկուայի հայ գաղութի ներկայացուցիչը լինելու։

Հասարակութեան մեծամասնութիւնը չպիտի ցանկանար մասնակցնել Էջմիածնի «սարքած» տօնին։ Եւ մի՞թէ իրաւունք ունէր 19 հոգին առանց հասարակութեան մեծամասնութեան կարծիքը իմանալու ինքնագլուխ որոշում կայացնել։

Թերևս պատճառաւանն, թէ ժամանակի և տեղի անյարմարութիւնները հնարաւորութիւն չտին բազմամարդ ժողովներ գումարել, այն ժամանակ ուրիշ լաւ է չունենալ ներկայացուցիչ Էջմիածնում, քան թէ այսքան տգեղ կերպով հասարակական իրաւունքները շահագործել։

Դաղուքիս գիտակից տարրի բարոյական պարտքն է, կարծում ենք, բողոքել «ժողովուրդ» խմբակի ոտնձգութիւնների դէմ և յայտարարել, որ ընտրած պատգամաւորը իր ներկայացուցիչը չէ։

Արգուս

—

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

—

Կարս, 7 հոկտեմբերի

Ամսոյս 3-ին տեղիս հայոց ծխական դպրոցում, նոյն դպրոցի աւագ-ուսուցիչ պ. Կ. Դիւլնազարեանի հրաւիրաթոք տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով, Կարսի յանձնրդ Երեմիա վարդապետի նախագահութեամբ։ Ի նկատի ունենալով, որ դպրոցի հոգաբարձութեան և մանկավարժական խորհրդի կողմից կազմած կար հանդէսի ծրագրի ուրագիծը, ժողովը ուղղակի անցաւ այդ ուրագծի քննութեանը և իր կողմից յաւելուածներ անելով, որոշեց հետեւեալը.

ա) Որպէսզի տօնին մասնակցելը տանքի տան բոլոր բաժանմունքներում բացատրել մանրամասն բոլոր աշակերտուհիներին մեծ տօնի նշանակութիւնը, 3) ձեռք բերել Մասակ-Մեսրոպի պատկերները և նրանց մասին տպագրած գրքերը և բաժանել բոլոր աշակերտուհիներին։ 4) Նոյն օրը ի յիշատակ մեծ տօնի ճաշ տալ 100 չքաւոր աշակերտուհիներին և բոլոր բանւոր ծառայողներին, 5) Կիրակի, ամսոյս 13-ին, վարչութեան ամբողջ կազմով, ուսուցիչներով և աշակերտուհիներով ներկայ լինել Վանքի աւագ եկեղեցում յոբելեանական մաղթանքին, և այնուհետև ներկայացուցիչներ ուղարկել Ներսիսեան դպրոցը ներկայ լինելու յոբելեանական հանդէսին։

—

Հաղորդութիւն մեզ գրում են, որ տառերի գիւտի և տպագրութեան յոբելեանը կը կատարուի այնտեղի ծխական դպրոցում հոկտեմբերի 13-ին ցերեկոյթով։ Նախաձեռնութեամբ ուսուցչական խմբի։

—

ՈՒՂՂՈՒՐՊԱՏՈՐՆԵՐ

Մոսկա, 4 հոկտեմբերի

Էջմիածնից հրաւիրաթուղթ է ուղարկած տեղիս հայ գաղութի եկեղեցական գոյքերը կառավարող խորհրդին՝ իր ներկայացուցիչը ուղարկելու Էջմիածին մտնելու տօնակատարութեան մասնակցելու համար։

Երէկ Գասպարեան անկիւնացուցում ժողով էր գումարած խորհրդակցելու համար, թէ ինչպէս պէտք է տօնել ազգային այդ մեծ տօնը։

Ի միջի այլոց պէտք էր որոշել Էջմիածին ուղարկելիք պատգամաւորի հարցը։

Դաղտնիք չէ, որ Էջմիածինը, հանդէս գալով ուզուրպատորի դերում, խլեց ժողովրդից ազգային մեծ տօնի կատարման ձեռներէջութեան իրաւունքը և դրանով ժողովրդի մէջ երկպառակութիւն ցցելով նրա միրոը կոտրեց։ Եւ այդ է պատճառը, որ երբէկայ ժողովին միայն 19 հոգի էր եկել։ Այդ 19 հոգին էլ որոշեց ներկայացուցիչ ուղարկել Էջմիածին։ Այստեղ յիշենք, որ Մոսկուայի հայ գաղութի թիւը ցուցակագրած է մօտ 600 հոգի։ Արդ, մի՞թէ 19 հոգով ընտրած պատգամաւորը բարոյական իրաւունք ունի Մոսկուայի հայ գաղութի ներկայացուցիչը լինելու։

Հասարակութեան մեծամասնութիւնը չպիտի ցանկանար մասնակցնել Էջմիածնի «սարքած» տօնին։ Եւ մի՞թէ իրաւունք ունէր 19 հոգին առանց հասարակութեան մեծամասնութեան կարծիքը իմանալու ինքնագլուխ որոշում կայացնել։

Թերևս պատճառաւանն, թէ ժամանակի և տեղի անյարմարութիւնները հնարաւորութիւն չտին բազմամարդ ժողովներ գումարել, այն ժամանակ աւելի լաւ է չունենալ ներկայացուցիչ Էջմիածնում, քան թէ այսքան տգեղ կերպով հասարակական իրաւունքները շահագործել։

Դաղուքիս գիտակից տարրի բարոյական պարտքն է, կարծում ենք, բողոքել «ժողովուրդ» խմբակի ոտնձգութիւնների դէմ և յայտարարել, որ ընտրած պատգամաւորը իր ներկայացուցիչը չէ։

Արգուս

—

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

—

Կարս, 7 հոկտեմբերի

Ամսոյս 3-ին տեղիս հայոց ծխական դպրոցում, նոյն դպրոցի աւագ-ուսուցիչ պ. Կ. Դիւլնազարեանի հրաւիրաթոք տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով, Կարսի յանձնրդ Երեմիա վարդապետի նախագահութեամբ։ Ի նկատի ունենալով, որ դպրոցի հոգաբարձութեան և մանկավարժական խորհրդի կողմից կազմած կար հանդէսի ծրագրի ուրագիծը, ժողովը ուղղակի անցաւ այդ ուրագծի քննութեանը և իր կողմից յաւելուածներ անելով, որոշեց հետեւեալը.

ա) Որպէսզի տօնին մասնակցելը

Կարսի ամբողջ հայ հասարակութեան կողմից ընդհանուր ընտրութիւն կրի, տեղիս պետական պաշտօնեաների հայ ուսուցչութեան և աշակերտութեան մասնակցութեան համար Երևանի թեմական կալ առաջնորդի միջոցով թոյլատրեցին ստանալ ուժից հարկն է։

բ) Հարեւորել որ տօնի օրը քաղաքում փակուին բոլոր հայ խանութները, իսկ երկոյեան լուսավառուին լինի։

գ) Տօնի նշանակութիւնը բացատրելու համար դասախօսութիւններ կարդալ քաղաքի գանգան թաղամասերում աշխատաւոր դասի համար, իսկ նոյնքան այդ թուոցիկներ բաց թողնել։

դ) Տօնի օրը առաւօտեան, պատարագից յետոյ, զրկանաւորաժշտական բանվով և կիսանքի պատկերներով հանդէս ունենալ ամբողջ հայ աշակերտութեան համար հայոց դպրոցում, մուտքը ձրի. իսկ երեկոյեան նոյնպիսի հանդէս սարքել հասարակական ժողովարանում մեծերի համար վճարով արած ծախքերը ծածկելու համար։

Այս ծրագիրը է կատար ածելու համար դպրոցի վարչութեան կողմից արդէն ընտրված կար մի յանձնախումբ, որի անդամների թիւն որոշից մի երկուսին էլ ուելացնել ժողովականներից։ Իսկ զրկանաւորաժշտական հանդէսներ կազմակերպելու համար ընտրեցին առանձին մասնախմբեր։

Համաձայն հոգեւոր իշխանութեան կարգադրութեանց, ժողովի նախագահ Երեմիա վարդապետի կողմից առաջարկութիւն եղաւ էջմիածին գնալու համար պատգամաւոր ընտրել։ Ժողովը նախ իրեն լիագօր չհամարելով և երկրորդ չկամենալով տօնը էջմիածնի հետ կապել, այլ տօնին զուտ ժողովրդական բնաւորութիւն տալու համար մերժեց նախագահի առաջարկը, որոշելով այդ առիթիս հրաւիրել առանձին ծնական ժողով, որը լինելու էր անցած կիրակին։

Առաջին օգտուելով, աւելորդ չենք համարում մի երկու խօսք ասել սրանից ամիսներ առաջ գպրոցական փոնդի համար ընտրած հանգանակիչ մասնաժողովի մասին։ Այդ մասնաժողովը, որի մասին մենք գրել ենք ժամանակին, իրեն կատարեալ անգործութեան մատնեց և միայն գոռոներ կարողացաւ հաւաքել։ Այլ բան էլ չէր կարելի սպասել թխովի գործից։

Ց. Մկրտուեան

ԿԱՂՋԻԱՆԸ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՆԴԸ

—

Կաղզուան, 4 հոկտեմբերի

Ինչպէս նաղորդել էինք ժամանակին, կաղզուանը այս տարւայ փետրուարի 24-ին շքեղ հանդէսով տօնեց յոբելեանական տօնը. բայց ազգային մեծ տօնը յաւերժացնելու համար կազմեցիլք գպրոցական փոնդի օգնին մինչև այժմ ոչինչ չի արված այստեղ, նպաստ որ այդ բանի համար ընտրած մասնախումբը կայ, որը պէտք է զբաղանք կազմակերպէ և հանգանակութիւն անէր։ Վերջերս այդ մասնախմբի անդամներից մէկը Հրաւառակչական ընկ. տեղիս Ֆիլդի զուսմաթ ժողովի վերջում յայտարարեց թ. կի։ տութիւն ժողովականների, որ տարեկի գիտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանական տօնի առթիւ հանդանակելիք փողը պէտք յատկացնի ոչ թէ ընդհանուր գպրոցական փոնդին, այլ տեղիս գպրոցի կարիքներին, թէկուզ ուսուցչի ռոճկին առարկելով, որ Կարսի վարդապետ գպրոցական փոնդի օգնին տեղուանդարձեր փող է հանգանակել ու տարել։ Բայց պարոնը երևի մոռացել է, որ տեղիս երիտասարդութիւնը վարդապետին աջակցութիւն ցոյց չտուեց ասելով որ փոնդի համար գոյութիւն ունի ընդարձած մի ժամին, որի պարտականութիւնն է թէ հանգանակութիւն անել և թէ այլ միջոցներով նիւթական օգնութիւն անել գպրոցական փոնդին. և վարդապետի արածը մի մասնաւոր բան էր, որ արեց ուզեց։ Պարոնը անշուշտ մոռացել էր նոյնպէս, որ այդ նպատակով զուսմաթ ժողովում ձայների ճնշող մեծամասնութեամբ որոշից յոբելեանական մի զուսմաթ փոդի մի մասը ուղարկել գպրոցական փոնդի օգնին։ Իսկ մնացած մասով գնել տեղիս ծխ. գպրոցի համար դասական պատրաստներ որոնցից զուրկ է մեր գպրոցը։ Այսպէս է որոշած և այսպէս էլ պէտք է լինի, իսկ նայ հասարակութիւնը թող իր լուսնեներով ընդառաջ գնայ այսպիսի մի մեծ և օգտակար գործի իրականացման։

Սամսաար

ՅՈՒԲԵԼԵԱՆԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ

—

Գալով հայ թերթերում կարդում ենք. Դաշտգիլդի մէջ կամուած յոբելեանական յանձնաժողովը անդադ կաշխատի շքեղ հանդէս մը կազմակերպելու հոկտ. 13-ին և այդ մեծ օրան վեհութիւնը փառաւոր կերպով պանծացնելու։ Ցիշեալ յանձնաժողովը ճոխ ծրագիր մը պատրաստած է, բաժնած երկու մասի, որուն առաջին մասը կը կազմէ գրական հանդէս մը որ տեղի պիտի ունենայ ցերեկը, իսկ երկրորդը ժողովրդային հանդէս որ տեղի պիտի ունենայ գիշերը։ Յանձնաժողովը որոշած է գիշերային խրախճանութիւններ ալ սարքել, և այս առթիւ փառաւոր ջահանգաստութիւն մըն ալ պիտի կատարուի, որուն պիտի մասնակցի ամբողջ գաղութ հայութիւնը։

— Իսաեան Սանուց Միութեան կողմէ մեծ յոբելեանին առթիւ կազմակերպելիք շքեղ հանդէսը տեղի պիտի ունենայ հոկտեմբերի 13-ի կիրակի օրը. կէս օրէն ետքը, ժամը 1 ուկէսին, Փըքի Շանի ձեռնային թատրոնի մէջ։

— Գէշկիպաշի մէջ ազգային յոբելեանը փառաւոր կերպով տօնելու համար մասնախումբ մը կազմած է Նախճաւանեցիներու տեղւոյն քաղաքէն և ուսուցչական մարմնոյն և գործակցութեամբ ազգ. և կուսակցական մարմիններուն, որոնք արդէն ձեռնարկած են ճոխ բրօկրամի մը պատրաստութեան, որ կը խոստանայ փառաւոր կերպով պանծացնել սոյն ազգ. տօնը։ Տեղի պիտի ունենան բանախօսութիւններ Տր. Տաղաւարեանի և այլ անձնաւորութեանց կողմէ։